

Թեմա 7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գույքի ապահովագրություն

Ամեն օր ակնհայտ է ենթ լինում հրդեհների, տարերային աղետների, տեխնիկական վթարների, և այլ անկանխատեսելի պատահարների, որոնք խափանում են արտադրական և բիզնես պրոցեսները: Գույքի ապահովագրությունը հնարավորություն է տալիս խուսափելու այդպիսի պատահարների արդյունքում տեղի ունեցած ֆինանսական կորուստներից:

Ինչպես արդեն նշել էինք, հնարավոր է ապահովագրել շենքեր և շինություններ, բիզնես կենտրոններ, արտադրական տարածքներ, գործարաններ և այլն:

Ի լրումն սրանց՝ հանդիպում է նաև.

- Բիզնեսի ընդհատման ապահովագրություն,
- և մեքենա-սարքավորումների խափանման ապահովագրություն:

Հատուցման վճարման պայմանները սահմանվում են ապահովագրության պայմանագրով և կարող են սահմանվել որպես՝

- վնասված գույքի փոխարինում,
- վերանորոգում,
- դրամային հատուցում:

Հնարավոր է ապահովագրվել երկու տարբերակներով՝

Տարբերակ 1 - Կոնկրետ ռիսկերից ապահովագրություն

Տարբերակ 2 - Բոլոր ռիսկերից ապահովագրություն

Գյուղատնտեսական ապահովագրություն

Գյուղատնտեսական ապահովագրությունը Հայաստանում գյուղացիներին հնարավորություն է տալիս ապահովագրելու իրենց այգիները և հողատարածքները անցանկալի բնական երևույթներից: Գյուղատնտեսության ապահովագրությունը նախատեսված է գործունակ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար, ովքեր տիրապետում, վարձակալում և/կամ շահագործում են պտղատու այգի, դաշտ, հողատարածք: **Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հիմնադրված «Գյուղատնտեսությունը ապահովագրողների ազգային**

գործակալությունը (ԳԱԱԳ)» կոորդինացնում է գյուղատնտեսության ապահովագրական համակարգը և աջակցում դրա զարգացմանը:

Ոչ բոլոր ապահովագրական ընկերություններն են իրականացնում գյուղատնտեսական ապահովագրություն: Նման ընկերությունների ցանկը հնարավոր է ճշտել Գյուղատնտեսությունը ապահովագրողների ազգային գործակալությունից, իսկ ապահովագրության պայմանները բոլոր ապահովագրական ընկերություններում նույնն են:

Ապահովագրավճարը հաշվարկելիս հաշվի են առնում՝

- **Մշակաբույսի տեսակը** - այս պահին հնարավոր է ապահովագրել հետևյալ մշակաբույսերը՝ ծիրան, խաղող, բալ, կեռաս, խնձոր, դեղձ, սալոր, սեխ, ձմերուկ, կարտոֆիլ, հացահատիկային մշակաբույսեր և պտղատու այգիներ, որոնք աճեցվում են գյուղատնտեսի կողմից:
- **Ռիսկի տեսակը** - ապահովագրվում են եղանակային հետևյալ **ռիսկերից**՝ կարկուտ, երաշտ, հրդեհ, գարնանային ցրտահարություն:
- **Հողատարածքի չափը** - եթե հողատարածքը գտնվում է մեկ կադաստրային վկայագրի կամ վարձակալության համաձայնագրի ներքո, ապա այն պետք է ապահովագրվի ամբողջությամբ:
- **Ֆերմերի կողմից ընտրված ապահովագրական գումարը:**
- **Համայնքը/ազդեցության գոտին** - Հայաստանի տարբեր համայնքներում կարկուտի և ցրտահարության հաճախականությունը տարբեր է, որի պատճառով ապահովագրավճարի չափը կարող է տարբերվել տարբեր համայնքներում գտնվող հողատարածքների համար:
- **Եվ, իհարկե, սուբսիդավորման չափը** - Գյուղատնտեսության ապահովագրությունն իրականացվում է պետության ֆինանսական աջակցությամբ. կարկուտ և հրդեհ ռիսկերից ապահովագրության դեպքում գյուղատնտեսության ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի 50%-ը, իսկ գարնանային ցրտահարում ռիսկից ապահովագրության դեպքում՝ 60%-ը սուբսիդավորում է պետությունը: Ի դեպ, սուբսիդավորում բառը նշանակում է, որ ապահովադրի փոխարեն ապահովագրական ընկերությանը վճարում է պետությունը:

Հաջորդ՝ առավել հաճախ հանդիպող ապահովագրության տեսակներից կարող ենք առանձնացնել դժբախտ պատահարներից ապահովագրությունը:

Այս ապահովագրության համար ապահովագրական պատահարներն (ռիսկեր) են՝

- դժբախտ պատահարի հետևանքով ապահովագրվածի աշխատունակության ժամանակավոր կորուստը,
- դժբախտ պատահարի հետևանքով ապահովագրվածի աշխատունակության մշտական կորուստը, այդ թվում՝ աչքի կամ վերջույթի կորուստը,
- և, իհարկե, մահը:

Պատահարները կարող են ի հայտ գալ բիզնեսում տեղի ունեցած վթարի, բնական աղետների, ճանապարհատրանսպորտային պատահարների, երրորդ անձանց անօրինական գործողությունների, ահաբեկչության և այլ հետևանքներով:

Ապահովագրության հաջորդ տեսակի մասին, վստահաբար, բոլորս շատ ենք լսել, դա **ավտոտրանսպորտային պատահարի պարտադիր ապահովագրությունն է:**

Ապահովագրության այս տեսակին պետք է դիմեն ոչ միայն ֆիզիկական, այլև իրավաբանական անձինք՝ կազմակերպությանը պատկանող ավտոտրանսպորտային միջոցների համար:

ԱՊՊԱ-ն ավտոմեքենաների պարտադիր ապահովագրություն է, որով հատուցվում են ավտովթարի հետևանքով տուժողին պատճառված անձնական և գույքային վնասները:

Բացի ԱՊՊԱ-ից՝ մենք կարող ենք ձեռք բերել նաև ԿԱՍԿՈ պայմանագիր, որը կհատուցի հենց մեր մեքենայի վնասը, ընդ որում ոչ միայն ճանապարհատրանսպորտային պատահարից, այլ նաև շատ ու շատ այլ պատահարներից ևս, օրինակ՝ գողություն, կարկուտ, քամիներ, հրդեհ և այլն:

Բացի այդ, գործում են նաև ապահովագրության այլ տեսակներ, օրինակ երբ հավելավճարի դիմաց մեծացվում է ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված պատասխանատվության սահմանաչափը:

Ապահովագրության վերջին տեսակը, որին կանդրադառնանք այս տեսադասի ընթացքում, առողջության ապահովագրությունն է:

Այսօր շատ կազմակերպություններ իրենց աշխատակիցների համար իրականացնում են առողջության ապահովագրություն: Սրանով աշխատակիցները հնարավորություն են ստանում անցնելու տարեկան որոշակի բժշկական զննումներ, օգտվելու

կանխարգելիչ միջոցառումներից, հիվանդանալու դեպքում՝ ստանալու պայմանագրից բխող անվճար բժշկական ծառայություններ և այլն:

Ցանկացած ապահովագրության տեսակից օգտվելիս կարևոր է հիշել, որ **մինչև ապահովագրական պայմանագրի կնքելն անհրաժեշտ է ուշադիր և մանրամասն կարդալ պայմանագրի և վկայագրի, այն է՝ պոլիսի բոլոր կետերը:** Հատկապես ուշադրություն դարձրեք հետևյալ կետերին՝

- ապահովագրության օբյեկտը,
- հատուցման ենթակա ապահովագրական պատահար,
- բացառություններ, որոնց դեպքում չի տրվում հատուցում,
- պատահարի մասին տեղեկացնելու կարգ և ժամկետ,
- վնասի գնահատման կարգ,
- ապահովագրական հատուցման կարգ,
- պայմանագրի փոփոխման և վաղաժամկետ լուծման կարգ:

Այսպիսով, ինչպես տեսաք, ապահովագրությունը յուրահատուկ ֆինանսական գործիք է, որը հնարավորություն է տալիս նախապես պաշտպանվելու հնարավոր ֆինանսական ռիսկերից, լինելու հանգիստ, և եկամուտներն անհոգ ծախսելու բիզնեսի զարգացման համար կարևոր մյուս բոլոր ուղղություններով: